ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/26

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Նամենասեդ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 26.02.2019թ.)

Քննելով Ագարակի համայնքապետարանի կողմից Ագարակի համայնքապետարանի կարիքների համար մի քանի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԱՄ-ԱԳ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Նամենասեդ» ՍՊԸ-ի կողմից 22.02.2019թ. ներկայացված և 25.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/26 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Նամենասեդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նամենասեդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Ագարակի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀԱՄ-ԱԳ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 11.02.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նամենասեդ» ՍՊԸ-ն, ինչի արդյունքում Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Նամենասեդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /11.02.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 68,097 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից «Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքով

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Նամենասեդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 68,097 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ «Նամենասեդ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Ընկերությունը նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Նամենասեդ» ՍՊԸ-ն 11.02.2019թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Ընկերությունը նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ

տեղեկատվություն, և «Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Ընկերությունը հայտնել է, որ որևիցե եղանակով երբևիցե չի ծանուցվել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով առկա պարտավորության առկայության մասին: Փաստացիորեն առկա է եղել արձանագրված պարտավորության մասով «Նամենասեդ» ՍՊԸ-ի իրազեկված չլինելու հանգամանքը, քանզի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ կարող էր ստանալ միայն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի»-ից, իսկ նշված քարտի տվյալների համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն:

Ընկերությունը գտնում է, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ...:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերույթունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է դադարեցնել Ագարակի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄ-ԱԳ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2019թ. թիվ 3 արձանագրության 1 կետի համաձայն՝ «Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.02.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Ագարակի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Ագարակի համայնքապետարանը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրել «ՀՀԱՄ-ԱԳ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.02.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

<u>3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ԱՄ-2019/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Ագարակի համայնքապետարանի կողմից Ագարակի համայնքապետարանի կարիքների համար մի քանի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԱՄ-ԱԳ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ***<u>11.02.2019թ.</u>*** հայտ է ներկայացրել «Նամենասեդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացաարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 8.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Նամենասեդ» ՍՊԸ-ն:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 18.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նամենասեդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 68 097 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը, մերժել է «Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Նամենասեդ» ՍՊԸ-ի 22.02.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Ագարակի համայնքապետարանի կողմից ներկայացված «ՀՀԱՄ-ԱԳ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց

պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, Ագարակի համայնքապետարանի կողմից Ագարակի համայնքապետարանի կարիքների համար մի քանի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԱՄ-ԱԳ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ***11.02.2019թ.*** հայտ է ներկայացրել «Նամենասեդ» ՍՊԸ-ն:

Ընթացաարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 8.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Նամենասեդ» ՍՊԸ-ն:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 18.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նամենասեդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 68 097 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը, մերժել է «Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 11.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 11.02.2019թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության 21.02.2019թ. թիվ 213 տեղեկանքը առ այն, որ 11.02.2019թ. դրությամբ Ընկերությունը ունի 68 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է

իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.02.2019թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Նամենասեդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 68 097 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է օրենքով նախատեսված շեմը:

Սակայն, ուսումնասիրելով Ընկերության 11.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 11.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման փաստական հանգամանքներով կայացրել է ԳԲԽ-ԱՄ-2018/83 և ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունները պարտավորությունները կատարելիս առաջնորդվել են բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները

որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելը, ուստի տվյալ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, վերը նշված հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ «Նամենասեդ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նամենասեդ» ՍՊԸ-ի կողմից 22.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝ պարտավորեցնել Ագարակի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄ-ԱԳ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 20.02.2019թ. թիվ 3 արձանագրության 1 կետի համաձայն՝ «Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**